

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2014 թվականի գործունեության

Սույն հաշվետվությունը կազմվել է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն և ներառում է համառոտ տեղեկատվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 2014 թվականի (այսուհետ նաև՝ հաշվետու ժամանակաընթացք) գործունեության, հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտի (այսուհետ՝ նաև կարգավորվող ոլորտ) կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումների և Հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվության մասին:

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՅՈՂՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն օրենքով սահմանված իր իրավունքների և պարտականությունների շրջանակում իրականացնում է հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումը:

Կարգավորվող ոլորտն իր մեջ ներառում է՝

ա) էներգետիկայի բնագավառը (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգեր):

բ) ջրային համակարգը (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում):

գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը:

դ) տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառը:

ե) փոստային կապի բնագավառը:

զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը՝ սակագների սահմանման և վերանայման մասով:

Կարգավորվող ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով և այլ օրենքներով:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել օրենքներով ամրագրված գործառույթների և 2014 թվականի գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը:

Հանձնաժողովը 2014 թվականին գործել է հետևյալ կազմով՝

Լևոն Մնացականյան՝ Հանձնաժողովի նախագահ,

Միքայել Վիրաբյան՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Գագիկ Խաչատրյան՝ Հանձնաժողովի անդամ,

Լիանա Ավանեսյան՝ Հանձնաժողովի անդամ,

Աիդա Ավագյան՝ Հանձնաժողովի անդամ՝ մինչև 2014 թվականի հուլիսի 12-ը,

Մարինա Սարգսյան՝ Հանձնաժողովի անդամ՝ 2014 թվականի օգոստոսի 8-ից:

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները՝

- հանրային ծառայությունների կարգավորման բաժին,
- տնտեսական մրցակցության պաշտպանության բաժին,
- հեռուստատեսության, ռադիոյի և հեռահաղորդակցության բաժին,
- ֆինանսատնտեսագիտական և վերահսկողության բաժին,
- իրավաբանական և վարչական վարույթի բաժին,
- արտաքին կապերի բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի աշխատակազմը 2014 թվականի հուլիսի 1-ից անցել է քաղաքացիական ծառայության համակարգի, ինչի հետ կապված զգալի աշխատանքներ են կատարվել «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Հաշվետու ժամանակաընթացքում տեղի է ունեցել Հանձնաժողովի 13 նիստ: Ընդունվել է 58 որոշում՝ 10 նորմատիվ և 48 անհատական:

2014 թվականի ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմում շրջանառվել է ընդամենը 1294 գրություն, այդ թվում՝ 433 ելից և 861 մտից գրություն (ներքին՝ 368 (զեկուցագրեր, առաջարկություններ, դիմումներ, բացատրագրեր), պետական մարմիններից՝ 89, կարգավորվող անձանցից՝ 335, լիցենզավորված անձանցից՝ 69): Հսկողություն է իրականացվել գրությունների կատարման ժամկետների նկատմամբ: Արձակվել է 197 հրաման՝ կադրային, գործառնական ու կազմակերպչական բնույթի, և 168 հրաման (հանձնարարագիր)՝ ստուգումների և մոնիթորինգների իրականացման համար:

Հանձնաժողովի աշխատակիցների կողմից իրականացվել է 16 գործուղում, որից 3-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններ, 8-ը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ, 5-ը՝ արտերկրներ (Զեխիայի Հանրապետություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Հունգարիայի Հանրապետություն, Ավստրիայի Հանրապետություն):

Աշխատակազմի 12 աշխատակից մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և Հայաստանի ամերիկյան համալսարանի շարունակական ծրագրի համագործակցության շրջանակում կազմակերպված դասընթացներին, մեկ աշխատակից մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից կազմակերպված սեմինար-դասընթացին:

Հանձնաժողովը հետևողական աշխատանքներ է կատարել իր գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Հանձնաժողովի նիստերը լուսաբանվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, «karabakh-open.info», «karabakh-life.am», «news.am», «panarmenia.net», «aravot.am», «yerevannews.am», «artsakhpress.am», «aparaj.am» էլեկտրոնային կայքերով, «Ազատ Արցախ» և «Ստեփանակերտ» թերթերով, ինչպես նաև «Հ1», «Հ2», «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերությունների կողմից:

Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանվել է նաև Հանձնաժողովի պաշտոնական www.kargavorum.nkr.am կայքում և www.facebook.com սոցիալական ցանցում գործող Հանձնաժողովի պաշտոնական էջում:

2014 թվականի ընթացքում կայքն ունեցել է 4195 այցելություն (1280 այցելու), այդ թվում՝ 3916-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից և Հայաստանի Հանրապետությունից, 150-ը՝ Ադրբեջանից, 25-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 58-ը՝ ԱՄՆ-ից, 46-ը՝ այլ երկրներից:

Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ նույնպես կատարվել են զգալի աշխատանքներ՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման և արդյունավետ ներդրումների խրախուսման ապահովման առաջնահերթություններից:

Տրվել են առաջարկություններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Օրենսդրական փոփոխությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում Հանձնաժողովն ակտիվ համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և ազգային վիճակագրական ծառայության հետ:

Օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովը հրապարակել է 2013 թվականի գործունեության հաշվետվությունը մամուլում և 2015 թվականի գործունեության ծրագիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում:

ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանրային ծառայությունների ոլորտում 2014 թվականին շարունակվել են կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Ընդունվել է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման, ջերմամատակարարման և ջրամատակարարման համակարգերի կարգավորմանն առնչվող 12 որոշում՝ 6 նորմատիվ և 6 անհատական:

Էներգետիկայի բնագավառում հաշվետու ժամանակաընթացքում իրականացվել են էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց («Արցախէներգո», «Արցախգազ», «Պրոտոն», «Ալֆամագ», «Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերություններ, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն, «Իգոտոպ Դելտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծություն, լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների վերահսկում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների ամփոփում:

Ուսումնասիրության փուլում են գտնվում բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման վերաբերյալ առաջարկությունները:

Հաշվետու ժամանակաընթացքում տրամադրվել է 15 լիցենզիա՝

- «Իմաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՀԱԿ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար,

- «Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությանը ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման համար,

- «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի ներկրման, հաղորդման, բաշխման համար, էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման ցանցերի կառուցման համար,

- «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերությանը բնական գազի ներկրման, փոխադրման, բաշխման համար, բնական գազի փոխադրման և բաշխման ցանցերի կառուցման համար, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման համար:

Վերանայվել են «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից առաքվող, «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները, ինչպես նաև «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ամսական 10.0 հազար խմ և ավելի սպառում ունեցող սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար խմ բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձևը:

Սահմանվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից կատարված ներդրումների մասին հաշվետվության ներկայացման և ջերմամատակա-

րարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգերը:

Ջրային համակարգի ոլորտում հաշվետու ժամանակաընթացքում սահմանվել են «Ջրնուղ-Կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից կենցաղային կարիքների համար խնելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները, երկարաձգվել է «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերության ջրային համակարգի օգտագործման թույլտվության գործողության ժամկետը՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 25-ը, ինչպես նաև համլրվել է ընկերության գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը՝ ընդգրկելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝

ա) Ասկերանի շրջանի՝ Ասկերան քաղաքի և Խնապատ, Խաչեն, Խնձրիստան, Խրամորթ, Ակնաղբյուր, Ներքին Սզնեք, Խաչնաչ, Կարմիր Գյուղ, Սարուշեն, Ջրաղացներ, Մոշխմիատ, Իվանյան, Բերքաձոր, Նորագյուղ, Նախիջևանիկ, Վարդաձոր, Մադաթաշեն, Ավետարանոց, Հարավ համայնքների տարածքները,

բ) Սարտունու շրջանի՝ Սարտունի քաղաքի և ճարտար, Խնուշինակ, Սոս, Քարահունջ, Բերդաշեն, Նոր Շեն, Եմիշճան, Աշան, Վազգենաշեն, Թաղավարդ, Կաղարծի, Շեխեր, Հերիեր, Սպիտակաշեն, Մաճկալաշեն, Քերթ, Կարմիր Շուկա, Սարգսաշեն համայնքների տարածքները,

գ) Սարտակերտի շրջանի՝ Սարտակերտ քաղաքի և Մեծ Շեն, Մաղավուզ, Թալիշ, Մատաղիս, Նոր Մարաղա, Վարնկաթաղ, Գետավան համայնքների տարածքները,

դ) Հադրութի շրջանի՝ Հադրութ քաղաքի և Ջրակուս, Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ, Հարթաշեն, Նորաշեն, Ակնաղբյուր համայնքների տարածքները,

ե) Շուշիի շրջանի Շուշի քաղաքի տարածքը:

Կատարվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից («Ջրնուղ-կոյուղի», «Ջրային տնտեսություն», «Սարտակերտի ջրային տնտեսություն» և «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերություններ) ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների, ինչպես նաև «Ջրնուղ-կոյուղի» և «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունների ծառայությունների մատուցման որակի ցուցանիշների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունների ամփոփում:

Կազմակերպվել են քննարկումներ լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

Իրականացվել է «Ջրնուղ-կոյուղի» և «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերությունների թույլտվությունների պայմանների վերահսկում:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման և փոստային կապի բնագավառներում կատարվել են «Տեխնոսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Արցախփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն:

Հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում 2014 թվականին ընդունվել է 12 որոշում՝ 9 անհատական և 3 նորմատիվ:

2014 թվականի ընթացքում տրամադրվել է 3, դադարեցվել 2 ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն, ինչպես նաև կատարվել է փոփոխություն ռադիոհաճախականության օգտագործման 2 թույլտվության պայմաններում: Դադարեցվել է (Dial-up) թվայնացված բաժանորդահամարով մատուցվող ինտերնետ ծառայությունը: Ուժը կորցրած է ճանաչվել տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 1 լիցենզիա:

2014 թվականի հոկտեմբերին սակագնային պլանների սահմանմամբ բջջային կապի հետվճարային քարտերի բաժանորդներին նույնպես հնարավորություն է ընձեռվել օգտվելու Մեզա 25 և Մեզա 50 ինտերնետ-փաթեթներից:

Ուսումնասիրվել են ավանդորեն գերիշխող օպերատորի կողմից ներկայացված մի շարք սակագների վերանայման հայտեր, իրականացվել են համապատասխան վերլուծություններ:

2014 թվականին «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ցանկն համալրվել է 2048 կբիթ/վրկ արագությամբ կապի մատուցման ծառայությամբ:

Իրականացվել են նաև «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայտարարված մի շարք հրապարակային օֆերտաների ուսումնասիրություններ և համաձայնությունների տրամադրում, այդ թվում՝ «Միասին», «Շահավետ», «Ամանորյա» փաթեթների, «Ինքնորոշման արգելափակում» ծառայության վերաբերյալ և այլն:

2014 թվականի մարտի 17-ից 21-ը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մոնիթորինգի և չափումների բաժնի մասնագետների և Հանձնաժողովի հեռուստատեսության, ռադիոյի և հեռահաղորդակցության կարգավորման բաժնի աշխատակիցների կողմից Ստեփանակերտ, Մարտակերտ և Ասկերան քաղաքներում կատարված դիտարկումների արդյունքում Ստեփանակերտ քաղաքում հայտաբերվել են անօրինական գործող մի շարք ռադիոցանցեր և դրանց տեղադրման վայրերը: Պատասխանատու անձինք նախազգուշացումից հետո դիմել են Հանձնաժողով և ստացել համապատասխան թույլտվություններ:

Կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության հետ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սիրողական ռադիոօպերատորների լիցենզավորման, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օպերատորների միջև պիրինգի կազմակերպման և ծախսերի բաշխման մեթոդաբանության մշակման հարցերի վերաբերյալ:

Իրականացվել են լիցենզավորված ռադիոընկերությունների եթերների ընտրանքային դիտարկում և դիտարկման արդյունքների համադրում ռադիոընկերությունների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող ռադիոհաղորդումների գրանցամատյանների տվյալների հետ: Այս աշխատանքները շարունակական բնույթ ունեն և թույլ են տալիս ստուգել ռադիոընկերությունների եթերների համապատասխանությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում Հանձնաժողովը շարունակել է մրցակցային միջավայրի հետազոտությանը, գնային քաղաքականությանը, գերիշխող դիրքի և հակամրցակցային գործողությունների բացահայտմանն ուղղված աշխատանքները՝ տնտեսական մրցակցությունը դիտելով որպես շուկայական հարաբերությունները խթանող և կարգավորող ուժ:

Հաշվետու ժամանակաընթացքում ընդունվել են տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառին առնչվող 27 որոշում:

Իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- **առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների մոնիթորինգ.** Հաշվետու ժամանակաընթացքում Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է պարենային և ոչ պարենային 35 ապրանքային շուկաների 76 ապրանքատեսակների մանրածախ գների 53 մոնիթորինգ՝ 29 առևտրային օբյեկտներում, և կատարվել արդյունքների վերլուծություն:

Նշված ժամանակաընթացքում 76 ապրանքատեսակներից 8-ի գները նվազել են, 50 ապրանքատեսակների գները՝ աճել, իսկ 18-ինը՝ մնացել անփոփոխ:

Դիտանցումներ են իրականացվել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջկենտրոններում: Առավել ցածր գներ են արձանագրվել Բերձորում, իսկ ամենաբարձրը՝ Հադրութում: Ստեփանակերտ քաղաքի համեմատ միևնույն ապրանքների միջին հավելագինը Հադրութում կազմել է 5,41%, Մարտունիում՝ 4,03 %, Մարտակերտում՝ 4,0%, Շուշիում՝ 3,86 %, Ասկերանում՝ 2,65 %, Բերձորում՝ 0,68%:

- **անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտում.** Շարունակվել են աշխատանքները անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառելու ուղղությամբ, մասնավորապես՝ 2014 թվականի

ընթացքում Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 53 դիտանցում: Դիտանցումների արդյունքների հիման վրա 2014 թվականին վարչական վարույթ է հարուցվել և պատասխանատվության միջոց կիրառվել «Լուսակերտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ՝ արտադրած և իրացրած որոշ ապրանքատեսակների վրա տեղեկությունների բացակայության, անընթեռնելիության մասով, ինչպես նաև «Ֆեշն հաուս», «Բոմոնդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և «Հախումյան Լավրենտ» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ խանութների դիմային մասում ոչ ճիշտ արտապատկերված զեղչերի մասով:

Հաշվի առնելով հայաստանյան մամուլում տարածված լուրերը Երևանի բազմաթիվ բենզալցակայաններում «Սուպեր» տեսակի բենզինի վաճառքի վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք բենզին և դիզվառելիք ներմուծվում է Հայաստանի Հանրապետությունից, Հանձնաժողովի կողմից նախաձեռնվել են «Բենզին» և «Դիզվառելիք» ապրանքային շուկաների ուսումնասիրություններ:

2014 թվականի ապրիլին «Հաց» ապրանքային շուկայում անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով դիտանցումներ են իրականացվել Ստեփանակերտ քաղաքի 22 խանութներում: Մասնավորապես ստուգվել է հացի կշռի համապատասխանությունը բաղադրագրերով սահմանված կշռի հետ: Ստուգումների արդյունքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի խախտման (հասարակության մոլորեցում) համար «Ապեր» և «Մայակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև Աշոտ Գաբրիելյան և Արթուր Պողոսյան անհատ ձեռնարկատերերի նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ և կիրառվել պատասխանատվության միջոցներ՝ տուգանք:

2014 թվականի ընթացքում իրականացվել է տուրիստական և հյուրանոցային ծառայություններ մատուցող ընկերություններին պատկանող կայքերի համալիր ուսումնասիրություն: Ուսումնասիրված 17 կայքերից 12-ում հայտնաբերվել են տարբեր որակավորման կարգի նշաններ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող այն հյուրանոցների վերաբերյալ, որոնք չունեն օգտագործվող նշանին համապատասխանող որակավորման կարգ: Քանի որ հյուրանոցների որակավորման կարգի նշանի վերաբերյալ կեղծ տեղեկատվություն տարածող մյուս կայքերը պատկանում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտներին, Հանձնաժողովը գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ կայքերը սպասարկող տնտեսավարող սուբյեկտներից համապատասխան տեղեկատվություն պահանջելու և նշված խախտումները բացառելու նպատակով: Նշված խախտումը հայտնաբերվել է նաև «Միջազգային բիզնես կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող «Եվրոպա» հյուրանոցի կայքէջում, և հարուցվել է վարչական վարույթ, տրվել նախազգուշացում՝ խախտումները վերացնելու և հետագայում բացառելու հանձնարարությամբ:

- ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն և գերիշխող դիրք ունեցողների բացահայտում. 2014 թվականին կատարվել են մի շարք ապրանքային շուկաների ուսումնասիրություններ:

Մանրածախ առևտրի ոլորտում կատարված ուսումնասիրությունների հիման վրա 2014 թվականի հունվարին «Օկեան», «Վիաջջիո», «Նավ», «Հարութ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և «Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր կառավարման ներքո գտնվող առևտրային ցանցերն համարվել են գերիշխող դիրք ունեցողներ:

Ալկոհոլային խմիչքների (օղի, կոնյակ, գինի) շրջանառության ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում «Գինի» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցողներ են համարվել «Արցախ բրենդի կոմպանի» և «Ստեփանակերտի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերությունները, իսկ «Օղի» ապրանքային շուկայում՝ «Արցախ բրենդի կոմպանի» փակ բաժնետիրական ընկերությունը:

Դեղերի մանրածախ առևտրի ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունների հիման վրա «Ֆարմսերվիս» փակ բաժնետիրական ընկերության ընդհանուր կառավարման ներքո գտնվող առևտրային ցանցն համարվել է գերիշխող դիրք ունեցող:

Հաշվետու ժամանակաընթացքում պարբերաբար ուսումնասիրվել են նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների շրջանառության ծավալները և նրանց մասնաբաժինները համապատասխան ապրանքային շուկաներում: Ուսումնասիրությունների համաձայն «Անար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող առևտրային ցանցը կորցրել է իր գերիշխող դիրքը:

- **մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծություն.** Ուսումնասիրվել են 5 մենաշնորհ (6 ապրանքային շուկաներում) և 29 գերիշխող (47 ապրանքային շուկաներում) դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվությունները, որոնց համաձայն ապրանքային շուկաների մեծ մասում էական փոփոխություններ չեն արձանագրվել, չեն հայտնաբերվել նաև մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման դեպքեր:

Գերիշխող և մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից 2013 թվականի 2-րդ կիսամյակի գործունեության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունների հիման վրա կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ «Ֆարմացիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ «Հակաթույներ և թունավորումների ժամանակ օգտագործվող դեղեր», «Հակացնցումային, հակաէպիլեպսային դեղեր», «Հոգեմետ դեղեր» ապրանքային շուկաներում, «Տաթև-Վիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ «Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ», «Ախտորոշիչ միջոցներ», «Հակապարկինսոնային դեղեր» ապրանքային շուկաներում, և «Առողջություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ «Հակամիգրենային դեղեր», «Հակացնցումային, հակաէպիլեպսային դեղեր» և «Արգանդակօժիկներ և արգանդաթուլացնողներ» ապրանքային շուկաներում կորցրել են իրենց գերիշխող դիրքը:

- **մասնագիտական գիտելիքների կատարելագործում և տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության աստիճանի բարձրացում.** Հաշվետու ժամանակաընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են սեմինար-քննարկումներ «Գերիշխող դիրքի չարաշահում», «Հակամրցակցային համաձայնություններ», «Անբարեխիղճ մրցակցություն», «Պետական օժանդակություն» և «Համակենտրոնացում» թեմաներով:

Գերիշխող դիրք ունեցողների պարտավորությունների, օրենքի խախտումների և դրանց հետևանքների մասին իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպվել է «Գերիշխող դիրք» թեմայով սեմինար-դասընթաց՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասնակցությամբ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջև ստեղծվել են բնականոն աշխատանքային հարաբերություններ, որոնք ամրագրվել են հուշագրերով, համաձայնագրերով, որոնցից բխել են ամեն տարվա համատեղ աշխատանքային ծրագրերը:

2014 թվականին կայացած երեք համատեղ նիստերի արդյունքում ամփոփվել են 2010-2013 թվականներին իրականացված աշխատանքները, ստորագրվել նոր հուշագրեր և համաձայնագրեր, որոնցում նախանշվել են առաջիկա երեք տարիների ընթացքում կատարվելիք համատեղ աշխատանքների գերակա ուղղություններն ու նպատակները՝

- օրենսդրական դաշտի բարեփոխում,
- գործադիր գործառույթներ, փորձի փոխանակում,

- միջազգային համագործակցության ոլորտում ընդհանուր շահերի պահպանում, միջազգային փորձի տեղայնացում,

- ռազմավարական ծրագրերի համատեղ մշակում:

2014 թվականի հոկտեմբերի 20-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի նախագահությամբ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստառադիոընկերությունների համագործակցության ամրապնդման և ոլորտի հետագա զարգացման ուղիները» թեմայով համաժողովը, որին ներկա էին հայաստանյան և տեղական երկու տասնյակից ավելի հեռուստառադիոընկերություններ: Համաժողովի նպատակն էր նախ ստեղծել հարթակ դաշտում առկա խնդիրները վերհանելու և դրանց լուծման ուղիները հստակեցնելու համար, իսկ որպես հեռակա նպատակ՝ դնել հեռահաղորդակցության բնագավառում անկախ և ինքնուրույն լրատվամիջոցների բազմազանության երաշխավորման, այն է՝ ոլորտի իրավահարաբերությունների համարժեք և համաչափ կարգավորման հիմքերը, որպեսզի երաշխավորվի զանգվածային լրատվամիջոցների ազատությունը՝ միաժամանակ պահպանելով այդ ազատության և այլ սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը:

Համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները գործուղվել են Հայաստանի Հանրապետության կարգավորող մարմիններ, ինչպես նաև արտերկրներ՝ «Վերականգնվող էներգետիկա» (Զինաստանի ժողովրդական Հանրապետություն), «Մանրածախ առևտրի ոլորտում մրցակցության հարցերի վերաբերյալ» (Հունգարիայի Հանրապետություն), «Հեռահաղորդակցության ոլորտի վերլուծության և նոր մեդիադաշտի զարգացման ուղղությունները» (Չեխիայի Հանրապետություն) թեմաներով սեմինարներին, Հեռահաղորդակցության միջազգային կարգավորման ֆորումներին (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ավստրիայի Հանրապետություն) մասնակցության և փորձի փոխանակման նպատակով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հաշվառման վերցված նոր տնտեսավարող սուբյեկտներ չկան:

2014 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել **475528.5** հազար դրամ, որից՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ **122763,8** հազար դրամ, պետական տուրք՝ **18433.7** հազար դրամ, ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ **333913.7** հազար դրամ, տույժ՝ **17.3** հազար դրամ, վարչական տուգանք՝ **400.0** հազար դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ